«ԵՐԵՎԱՆԻ ԼԵՈՅԻ ԱՆՎԱՆ Հ65 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Առարկա՝ ***Պատմություն***

Մասնակից՝ ***Հասմիկ Աբրահամյան***

Ղեկավար՝ ***Արմինե Սաֆարյան***

Թեմա՝ ***Պատմության ուսուցչի կողմից սովորողների ուսուցման և դաստիարակության պլանավորումը՝ հանրակրթության պետական ու առարկայական չափորոշիչների համապատասխան***

ԵՐԵՎԱՆ-2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

ԳԼՈՒԽ 1. ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՉԻ ԿՈՂՄԻՑ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ 7

1.1. Սովորողների ուսուցման և դաստիարակության մոտեցումները «Պատմություն» առարկայի մեթոդիկայի շրջանակներում 7

1.2. Պատմության դասավանդման պլանավորումը դպրոցում 12

ԳԼՈՒԽ 2. ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՉԻ ԿՈՂՄԻՑ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ «ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ 7-ՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ 15

2.1. «Պատմություն» առարկայի 7-րդ դասարանի դասագրքի, հանրակրթության պետական ու առարկայական չափորոշիչների ուսումնասիրություն 15

2.2. Սովորողների ուսուցման և դաստիարակության պլանավորումը մեկ թեմայի շրջանակներում և ակնկալվող արդյունքները 20

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 23

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 24

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտական թեմայի արդիականության հիմնավորում:

«Պատմություն», մասնավորապես, «Հայոց պատմության», առարկայի դասավանդումը դպոցում և դասավանդման նոր մոտեցումների ներդրումը ժամանակի հրամայականն է, ինչն առաջին հերթին պայմանավորված է արդի հարափոփոխ իրականությամբ և այն հանգամանքով, որ ներկայումս հայ ժողովուրդն ապրում է իր պատմության, թերևս, ամոթագույն և դժվար ժամանակաշրջաններից ևս մեկը: Չցանկանալով թերագնահատել այլ ուսումնական առարկաների դասավանդման կարևորությունը և դասավանդող ուսուցիչների ավանդը մատաղ սերնդի դաստիարակման գործում՝ ընդգծենք, որ պատմության ուսուցչի դերը ներկայիս պայմաններում առավել ընդգծված է:

Մեր խորին համոզմամբ պատմության ուսուցիչը պետք է իր ուժերն ուղի մատաղ սերնդին այնպիսի, մասնավորապես, ռազմահայրենասիրական դաստիարակության տրմանը, որի կարիքն այնքան ունի ներկայիս դեռահասությունը: Ներկայումս մեր պատմությունը խեղաթյուրվում է ներքին և արտաքին թշնամու կողմից և պատմության ուսուցչի վրա մեծ պարտականություն է դրված կարողանալ սովորողների մեջ ձևավորել առաջին հերթին կեղծը և ճշմարիտը տարբերակելու կարողունակություն: Այն դեռահասը, ով պատմության ուսուցչի կողմից ուսուցանվել և դաստիարակվել է որպես հայ հաղթական գենի կրող, չի կարող ընդունել շարունակաբար խեղաթյուրվող պատմությունը. իսկ այդ խեղաթյուրումները, ցավոք, վառ արտահայտում են ստանում մեր պատմական հայրենիքի սահմաններին:

Անկախ այն հանգամանքից, թե յուրաքանչյուր դասի շրջանակներում ուսուցման և դաստիարակության ինչպիսի մոտեցումներ է պատկերացնում պատմության ուսուցիչը, այնուամենայնիվ, նա պետք է գործի հանրակրթության պետական ու առարկայական չափորոշիչների համապատասխան, որոնց առաջնային հենքը ՀՀ Սահմանադրությունն է: Զուր չէ, որ մենք առանձնապես կարևորում ենք պատմության ուսուցչի դերը, եթե այլ առարկաների շրջանակներում ուսուցիչները կրթում են կրթական որոշակի ցենզ ապահովելու համար, ապա պատմության դասավանդման շրջանակներում մենք կրթում և դաստաիարակում ենք պատասխանատու քաղաքացի, ով, ի վերջո, հայրենյաց պաշտպան է: Ավելորդ չենք համարում ընդգծել, որ պատմության դասավանդման շրջանակներում չպետք է տարբերակում դնել արական և իգական սեռի սովորողների միջև, քանի որ

այսօրեական իրականությունը դա թույլ չի տալիս: Առաջնորդումը պետք է լինի «առյուծը առյուծ է՝ էգ լինի, թե որձ» սկզբունքով:

Քաղաքացի կրթելու և դաստիարակելու խնդիրը պայմանավորված է շերտադասմամբ՝ մեթոդները տարբերվում են: Ուսուցման նյութի բովանդակության վրա ազդում է գաղափարական կողմը: Պատմության կրթությունն ունի նպատակներ՝ քաղաքացու դաստիարակություն, հայրենասիրություն, ազգասիրություն, փոխանցել գիտելիքներ ներկա ժամանակներում կատարվող իրողություններից, հայկական մշակութային նվաճումները համեմատել աշխարհի մշակութային նվաճումների հետ:

Վերը բերված կարողունակություններով օժտված քաղաքացու ձևավորումը բավականին բարդ գործընթաց է և ենթադրում է պատմության դասավանդման շրջանակներում բազմատեսանկյուն մոտեցման կիրառում: Բազմատեսանկյուն մոտեցումը բավականին հաճախ օգտագործվում է, սակայն դրա մասին գրեթե չի խոսվում: Այն թույլ է տալիս ձևավորել որոշակի ընկալման ռազմավարություն, որը ենթադրում է, որ մենք մեր սեփական տեսակետին զուգահեռ հաշվի ենք առնում նաև ուրիշի տեսակետը (կամ ուրիշների տեսակետները), քննարկում ենք դրանք և ըստ մեր սեփական մշակութային համատեքստի ազդեցության, արտացոլում ենք մեր դիրքորոշումը և մեկնաբանությունն այն մասին, թե ինչ է տեղի ունեցել և ինչու, թե ինչն է կարևոր և ինչը՝ ոչ:

Այս մոտեցման համատեքստում դրսևորվում են մեր նախապաշարմունքները և կաղապարները: Այս առումով բազմատեսանկյուն մոտեցումը ոչ միայն ռազմավարություն է, այլև նախատրամադրվածություն. այն նշանակում է «պատրաստ լինել և կամենալ իրադրությունը դիտարկել տարբեր տեսանկյուններից»: Դրա նախապայմաններն են, նախ և առաջ, *պատրաստակամությունը*՝ ընդունել, որ աշխարհը տեսնելու իմ սեփական եղանակից բացի գոյություն ունեն աշխարհը տեսնելու այլ եղանակներ, որոնք կարող են լինել նույնքան ճշմարիտ և նույնքան կողմնակալ, որքան իմ սեփականը, երկրորդ, *պատրաստակամություն*՝ պատկերացնել ինձ ուրիշի տեղում և աշխարհին նայել ուրիշի աչքերով, այսինքն ներապրումի ունակությունը և ապա միայն դուրս բերել այն գաղափարը, որը հնարավոր կլինի ծառայեցնել ի շահ մեզ, մեր հայրենիքի և պետականության[1]: Կարծում եմ, որ պատմության ուսուցիչը դասավանդման

[1] Ստրադլինգ Ռ. “Պատմության դասավանդման բազմատեսանկյուն մոտեցումը. Ուսուցչի ձեռնարկ” բնագրի այս թարգմանությունը հրատարակված է Եվրոպայի Խորհրդի և ԵրՊԼՀ միջև կնքված պայմագրի համաձայն: – Եր.: “‘Լինգվա”, 2008թ. –84 էջ, էջ 14:

շրջանակներում բազմատեսանկյուն մոտեցումը պետք է կիրառի այն համատեքստում, որ սովորողները կարողանան «ուրիշի կաշվի մեջ մտնել» և ըմբռնել նրանց թույլ կողմերը:

Պատմության դասավանդման գործընթացում սովորողների ուսուցման և դաստիարակության առանձնահատկությունների մեկնաբանմամբ, այդ գործընթացի արդյունավետության բարձրացմամբ է պայմանավորված ուսումնասիրվող թեմայի գծով հետաքրքրությունը, ընտրությունը և այժմեականությունը:

Հետազոտության նպատակի և խնդիրների սահմանում: Հետազոտության հիմնական նպատակն է կատարել պատմության ուսուցչի կողմից սովորողների ուսուցման և դաստիարակության պլանավորման մեթոդական մոտեցումների ուսումնասիրություն՝ գործընթացի արդյունավետության բարձրացման համատեքստում: Առաջադրված նպատակին հասնելու համար աշխատանքում դրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- դիտարկել սովորողների ուսուցման և դաստիարակության մոտեցումները «Պատմություն» առարկայի մեթոդիկայի շրջանակներում,
- ներկայացնել պատմության դասավանդման պլանավորումը դպրոցում,
- կատարել «Հայոց պատմություն» առարկայի 7-րդ դասարանի դասագրքի, հանրակրթության պետական ու առարկայական չափորոշիչների ուսումնասիրություն,
- ուսումնասիրել սովորողների ուսուցման և դաստիարակության պլանավորումը մեկ թեմայի շրջանակներում և ակնկալվող արդյունքները:

Հետազոտության օբյեկտի և առարկայի սահմանում: Ընդհանուր առմամբ հետազոտության օբյեկտը իրադարձությունների դրսևորումն է պատմություն առարկայի դասավանդման գործընթացում սովորողների ուսուցման և դաստիարակության պլանավորման պայմաններում, իսկ առարկան՝ որոշակի իրադարձությունների դրսևորման դեպքում (սովորողների ուսուցման և դաստիարակության պլանավորման գործընթացում հանդիպող բարդությունների) դրանց լուծմամբ ապահովված արդյունքները:

Հետազոտության իրականացման մեթոդի (մեթոդիկայի) ընտրություն: Հետազոտության խնդիրները լուծելու նպատակով ուսումնասիրություններ կատարելու ընթացքում կիրառվել են հետևյալ գիտահետազոտական մեթոդները.

- վերլուծվել և ընդհանրացվել են պատմություն առարկայի դասավանդման գործընթացում սովորողների ուսուցման և դաստիարակության կարևորության, պլանավորման վերաբերյալ աշխատությունները (վերլուծության, համադրման, դասակարգման մեթոդներ),

- ուսումնասիրվել են «Հայոց պատմություն» առարկայի շրջանակներում պլանավորման ամենանպաստավոր մոտեցումները՝ հանրակրթության պետական և առարկայական չափորոշիչների լույսի ներքո («Հայոց պատմության» ընտրությունը պայմանավորված է ժամանակի հրամայականով)
- դինամիկ դիտարկման մեթոդի կիրառման միջոցով ընդհանրացվել են, թե ինչ արդյունքներ կարող են ապահովել սովորողների ուսուցման և դաստիարակության գործում պատմության ուսուցչի կողմից ներդրված ջանքերը դինամիկայում:

Հետազոտության գերակա հարցը: Ո՞ր մոտեցումները կարելի է համարել արդյունավետ պատմության ուսուցչի կողմից սովորողների ուսուցման և դաստիարակության պլանավորման գործում:

Հետազոտության կառուցվածքը և ծավալը: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, ընդհանուր մասից, որը բովանդակում է 2 գլուխ, որոնցից յուրաքանչյուրը բովանդակում է երկուական ենթահարց, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից: Աշխատանքի ծավալը կազմում է 24 էջ:

ԳԼՈՒԽ 1. ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՉԻ ԿՈՂՄԻՑ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

1.1. Սովորողների ուսուցման և դաստիարակության մոտեցումները «Պատմություն» առարկայի մեթոդիկայի շրջանակներում

Պատմություն առարկայի դասավանդում իրականացվում է հետևյալ հիմնական 6 մեթոդներով՝ սովորողների պատմական գիտելիքների կառուցվածքը, պատմական փաստերի մասին պատկերացումներ ձևավորելու մեթոդիկա, ժամանակագրական պատկերացումների ձևավորման մեթոդիկա, պատմական փաստերի տեղադրումը տարածության մեջ: Քարտեզի հետ աշխատելու մեթոդիկա, պատմական հասկացությունների ձևավորումը պատմության դասերին, կարողունակությունների ձևավորման մեթոդիկա[2]: ՀՀ պետական չափորոշիչները և առարկայական ծրագրերը մեծ մասամբ հիմնված են վերջին մեթոդիկայի վրա:

Պատմական նյութի տեսական բովանդակության գիտակցված յուրացումը իրականացվում է բացատրման մեթոդով և դատողություններ ու եզրակացություններ կատարելու միջոցով: Կառուցելով կարծիքների, եզրահանգումների տրամաբանական շղթան՝ աշակերտները կատարում են դատողություններ: Բացի բացատրություններից ու դատողություններից կիրառում են ընդհանրացնող և պատկերավոր բնութագրումներ: Այս մեթոդը ուսուցիչները կիրառում են, երբ անհրաժեշտ է ներկայացնել պատմական փաստերի էական բնութագրիչները, կապերը և հարաբերությունները, դերը և նշանակությունը: Պատկերավոր բնութագրումները կիրառվում են ականավոր պատմական գործիչների ներկայացման ժամանակ:

Պատմության դպրոցական դասընթացում արդիական խնդիր է հանդիսանում աշակերտների մոտ նաև ձևավորել՝

- Տարբեր տեղեկատվություններ և վկայություններ բացահայտելու, մեկնաբանելու և վերլուծելու հմտություններ,
- Հարցերի հստակ ձևակերպման միջոցով պատասխանատու և հավասարակշռված որոշումներ ընդունելու կարողունակություն,
- Այլ կարծիքներ տեսնելու և ընդունելու կարողունակություն,
- Պատմական փաստը նրա մեկնաբանությունից տարբերելու կարողունակություն,

[2] Глазырина, Т. Н. Методика преподавания истории : учеб.-метод. комплекс для студентов специальности 1-21 03 01 «История» / Т. Н. Глазырина. – Новополоцк : ПГУ, 2011. – 356 с., с. 21.

- Պատմական երևույթների քննադատական գնահատման կարողունակություն,
- Անկախ և հիմնավոր եզրակացություններ կատարելու կարողունակություն,
- Պատմական երևույթները քննադատորեն գնահատելու կարողունակություն[3]:

Հատուկ պատմական կարողությունների ձևավորումը բազմակողմանի զարգացած անձի դաստիարակման պարտադիր պայմաններից մեկն է:

Պատմության ուսուցչի կողմից սովորողների դաստիարակության համատեքստում առանձնապես կարևորվում է ռազմահայրենասիրական դաստիարակությունը: Ռազմահայրենասիրական դաստիարակությունը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության կրթական համակարգի առաջնահերթություններից մեկը, քանի որ ապահովում է նախազորակոչային տարիքի անձանց մոտ բարձր ռազմահայրենասիրական գիտակցում, հայրենիքի հանդեպ քաղաքացիական պարտքը կատարելու պատրաստակամություն:

Ռազմահայրենասիրական դաստիարակությունը պետական մարմինների, հասարակական միավորումների, դեռահասների մոտ ռազմահայրենասիրական դաստիարակության բարձր գիտակցում ձևավորելուն նպատակամղված կազմակերպությունների բազմապլանային, համակարգված, նպատակաուղղված և համաձայնեցված գործունեություն է:

Վերջին երկու տասնամյակների իրադարձությունները հայկական իրականության մեջ առաջացրել են նաև կրթական հաստատությունների հանդեպ հասարակության սոցիալական պահանջմունքների փոփոխության: Կրթության առջև դրված է, թերևս, կարևորագույն խնդիրներից մեկը՝ անձի զարգացման: Այս պայմաններում ակնհայտ է ռազմահայրենասիրական դաստիարակության խնդրի լուծման հրատապությունը, քանի որ վերջինս նպատակաուղղված է այնպիսի անձի զարգացմանը, ով կկրի հայրենասեր քաղաքացու որակներ:

Ապագա քաղաքացու բոլոր որակական հատկանիշները ձևավորվում են դպրոցում: Վերջինս պատճառն է այն բանի, որ ռազմահայրենասիրական դաստիարակության կազմակերպման նոր հայեցակարգային մոտեցումները հանդիսանում են ժամանակակից մանկավարժների հիմնական և արդիական խնդիրը: Ռազմահայրենասիրական դաստիարակության միջոցով դեռահասի հոգում մարմնավորում է ստանում սերն առ

[3] Белослудцева В. В. Методика преподавания истории [Электронный ресурс] : учебнометодическое пособие / В. В. Белослудцева ; Пермский государственный национальный исследовательский университет. – Электронные данные. – Пермь, 2021. –88 с., с. 26.

հայրենիք, սերն առ պատմություն, մշակույթ: Դեռահասը գիտակցում է տարիների ընթացքում հայրենիքի ձեռքբերումները, կորուստները:

Ժամանակակից հայկական դպրոցներում ռազմահայրենասիրական դաստիարակության գործընթացում կարևոր է համարվում ռազմահայրենասիրության և մշակույթի հանդեպ սիրո ձևավորումը միջազգային հարաբերությունների հիմքով, որոնք առանձնահատուկ նշանակություն են ունենում դեռահասի սոցիալ-քաղաքական և հոգևոր արժեքների ձևավորման գործում: Միայն ռազմահայրենասիրության և ազգային սրբավայրերի հանդեպ վեհ զգացողությունների առաջացմամբ է ամրանում սերն հայրենիքի հանդեպ, ձևավորվում է նրա հզորության, պատվի և անկախության, նյութական և հոգևոր արժեքների պահպանման պատասխանատվություն:

Ռազմահայրենասիրական դաստիարակությունը երեխայի մեջ արմատավորելու հարցում առանձնահատուկ տեղ է հատկացվում դպրոցին և ընտանիքին: Դպրոցում հնարավորություն է ստեղծվում տարբեր առարկաների դասավանդման միջոցով հասնել այն արդյունքին, որ երեխայի ներսում ամրապնդվում են ռազմահայրենասիրական դաստիարակության դասերը:

Մատաղ սերնդի հայրենասիրական դաստիարակությունը մշտապես գտնվել է ժամանակակից դպրոցի ուշադրության կենտրոնում, քանի որ մանկությունն ու պատանեկությունը ամենանպաստավոր շրջանն է անձի մոտ հայրենիքի նկատմամբ իր պատկերացումները ճիշտ ձևավորելու, սիրո զգացմունքն արմատավորելու և որպես հայրենիքի պաշտպանի գիտակցումը սերմանելու համար: Այս հարցն էլ ավելի սուր է ներկայանում մեր օրերում, քանզի այսօր ակներև է ավանդական հայրենասիրական գիտակցության մակարդակի նվազումը:

Հայրենիքը միայն հողն ու ջուրը չի, որ արժանի է և ենթակա պաշտպանության նրա զավակների կողմից: Հայրենիքը նաև մի մեծ տուն է, ընտանիք, որի հետ մարդը պետք է աշխատի և որին պետք է ծաղկեցնի, ղեկավարի և դարձնի բարեկեցիկ և արժանավայել ապրելու տեղ: Հայրենիքը պիտի լինի այն վայրը, որտեղ ապրելը յուրաքանչյուր անձի համար պատիվ լինի:

Մտավորականներից շատերը և մանկավարժների մեծամասնությունը իրենց ուսումնասիրություններում հանգել են այն եզրակացության, որ անձի ձևավորման վրա ռազմահայրենասիրական դաստիարակությունը ունի բազմակողմանի ազդեցություն: Ուշինսկին համարում էր, որ ռազմահայրենասիրությունը ոչ միայն դաստիարակության խնդիրներից մեկն է, այլև հզոր մանկավարժական գործիք: Նա նշում է. «Ահա ինչպես գոյություն չունի անձն առանց ինքնասիրության, այդպես էլ գոյություն չունի մարդը

առանց հայրենիքի հանդեպ սիրո, և այդ սերը դաստիարակությանը տալիս է դեպի մարդու սիրտը տանող ճշմարիտ բանալի և հզոր աջակցություն չար բնությունը, անձնական, ընտանեկան ու տոհմական հակումներին դեմ պայքարելու համար»:

Դպրոցներում ռազմահայրենասիրական դաստիարակության տարրեր պարունակում են գրեթե բոլոր առարկաները, պատմությունն առավելապես: Ռազմահայրենասիրական դաստիարակությունը սկսում է հայրերի և պապերի երկրի համար կատարած գործերի հանդեպ սիրուց և հարգանքից: Մենք կարող ենք հպարտանալ ոչ միայն գիտական ձեռքբերումներով կամ պատերազմական գործողություններում մեր հաջողություններով, այլև մշակույթով: Մշակույթի պատմությանը, հայ գրականությանը, պատմությանը ծանոթանալը դեռահասի հոգեբանության վրա ունենում է առանձնակի ազդեցություն: Սույնով կարևորվում է պատմության դասավանդման կարևորությունը դպրոցում: Ռազմահայրենասիրական դաստիարակության գծով համակարգված աշխատանքը, բնականաբար, կհանգեցնի արդյունքի:

Իսկ ինչի՞ն է նպաստում ռազմահայրենասիրական դաստիարակության հիմքերը դպրոցում: Ստորև ըստ ենթակետերի ներկայացվում է ռազմահայրենասիրական դաստիարակության տեսական հիմքերի կիրառման արդյունավետությունը՝

• սովորողների մոտ կատարելագործելու իրենց աշխատանքի, ազգի, նրա ավանդույթների և հաղթանակների նկատմամբ հարգանքը և հպարտության զգացմունքը,

• նպաստել հոգեպես հարուստ և սոցիալապես ակտիվ կեցվածքով հայ քաղաքացու ձևավորմանը,

• սովորողների կողմից կրճատել տարբեր օրինախախտումների և նրանց մոտ առկա վնասակար սովորույթների մակարդակը,

• պահպանել և տարածել ՀՀ պետական խորհրդանիշերի (զինանշան, դրոշ, օրհներգ) բովանդակությունն ու նշանակությունը՝ սկսելով այս գործընթացը տարրական դպրոցից. դպրոցի յուրաքանչյուր աշակերտ պետք է իմանա օրհներգը,

• բարձրացնելու աշակերտների՝ ազգային շահերի պաշտպանության ձևավորմանն նպատակաուղղված ռազմահայրենասիրական դաստիարակությունը՝ միաժամանակ սերմանելով հանդուրժողական և հարգալից վերաբերմունք այլ ազգերի նկատմամբ,

• նպաստել հայության ինքնության ամրապնդմանը նպաստող գործողությունների իրականացմանը,

• յուրաքանչյուր սովորողի մոտ արմատավորել սեփական ազգի պատմության ու պետության կայացման գործում իր մասնակցության կարևորությունն ու դրա իրական

հնարավորությունը՝ «Ինձնից է կախված իմ ազգի և պետության ապագան» կարգախոսի արմատավորում,

• դպրոցում հայրենասիրական դաստիարակության համակարգի կայացմանը, դրա արդյունավետ գործունեությանն ու մշտական կատարելագործմանը:

Ռազմահայրենասիրական դաստիարակության ուղղված ցանկացած գործողություն կլինի անարդյունավետ այն դեպքում, երբ առկա չէ ընտանիքի մասնակցությունը: Ռազմահայրենասիրական դաստիարակությունը հաջողությամբ է պսակվում, եթե ընտանիքի հետ տարվող աշխատանքը և երեխայի դաստիարակությունը կատարվում են միաժամանակ: Այսօրվա պայմաններում առանց ընտանիքի հետ ձևավորված համագործակցության առկայության հնարավոր չէ արդյունավետ կերպով կազմակերպել դեռահասի հետ աշխատանքը:

Առանձնապես կարևորվում է սովորողների կողմից պատմության դասավանդման ընթացքում պատճառահետևանքային կապերի և օրինաչափությունների ճանաչման գործընթացը: Այս խնդրի լուծումը պահանջում է հաշվի առնել պատմության մեջ գիտելիքների աստիճանական զարգացումը և պատմական փաստերի միջև հաջորդական կապերի հաստատումը: Մինչև պատմություն ուսումնասիրելը աշակերտները գիտեն, որ ցանկացած երևույթ չի լինում առանց պատճառի և հետևանքի: Դրանք են, որ մղում են մարդկանց որոշակի գործողությունների: Դրա համար պատմության դասավանդման հիմնական խնդիրներից մեկն է՝ սովորեցնել աշակերտներին տեսնել և մեկնաբանել ցանկացած պատմական իրադարձության պատճառը: Կարևոր է նաև սովորել տարբերել պատճառները առիթից: Յուրացնելով պատճառահետևանքային կապերի էությունը՝ սովորողները պետք է վերարտադրեն տրամաբանված պատմական նյութը և հիմնավոր եզրահանգումներ կատարեն: Պատճառահետևանքային կապերի ընկալումը սովորողների համար պարզաբանում է պատմական օրինաչափությունները, նպաստում է պատմական երևույթների գիտակցված յուրացմանը: Դրա համար անհրաժեշտ է պատմական փաստերը և երևույթները ներկայացնել շղթայաձև .

1.Աշակերտների մոտ ստեղծել վառ պատկերացումներ այդ շղթայի յուրաքանչյուր օղակի վերաբերյալ,

2.ապահովել այդ օղակների միջև պատճառահետևանքային կապը,

3.միասնական պատճառահետևանքային կապերը վերլուծել ընդհանրացված ձևով[4]:

[4] Вяземский Е. Е., Стрелова О. Ю. Методика преподавания истории в школе. М.: Владос. 2003. 384 с., с. 51.

Սովորողները պետք է հասկանան, որ պատմական գործընթացներում եթե-ներ չեն լինում, ամեն ինչ ունի իր պատճառահետևանքային կապերը և օրինաչափությունները:

1.2. Պատմության դասավանդման պլանավորումը դպրոցում

Դասավանդման գործընթացի արդյունավետ պլանավորումը ողջ ուսումնական գործընթացի արդյունավետության երաշխիքն է: Եթե պատմության դասավանդումը համակարգված չի իրականացվում, ապա սովորողների բարձր առաջադիմության և հայրենասեր, պատասխանատու անհատի ձևավորումը մնում է չհաղթահարված:

Պլանավորումը բավականին բարդ գործընթաց է ևս սկսվում է ուսումնական համալիրների ընտրությունից: Ուսումնական համալիրներ ասելով սովորաբար հասկանում ենք ուսումնամեթոդական գրականությունը, զննական և այլ միջոցները պատմության դասավանդման յուրաքանչյուր դասընթացի վերաբերյալ: Այս հասկացությունների մեջ մտնում են՝

1. Ուսումնական ձեռնարկներ (ուսումնական օժանդակ ձեռնարկներ, քրեստոմատիաներ, ընթերցանության համար նախատեսված գրքեր):

2. Մեթոդական գրականություն:

3. Գիտական, գիտահանրամատչելի և գեղարվեստական գրականություն (մենագրություններ, ընթերցանության համար նախատեսված գրքեր):

4. Ուսումնական զննական միջոցներ (տպագիր, ծավալուն, էկրանային և ձայնային):

Հիմնական դասագրքերն ու սովորողների համար նախատեսված ուսումնամեթոդական գրականությունը ընդգրկվում են հանրապետական համալիր ծրագրերում, որոնք երաշխավորում են յուրաքանչյուր սովորողի պետական չափորոշիչներով սահմանված բազային գիտելիքների ուսացումն ու յուրացումը:

Ուսումնական ծրագրով նախատեսված կրթության բովանդակությունը որոշակիացվում է դասագրքերում, ուսումնական ձեռնարկներում, մեթոդական ցուցումներում: Հանրապետական նշանակություն ունեցող բոլոր համալիր դասագրքերի աստիճանն ու բովանդակությունը որոշվում է պետական կրթական ծրագրով կամ պետական չափորոշիչներով: Ամեն մի դպրոց մշակում է իր ուսումնական պլանը՝ հաշվի առնելով հետևյալ հանգամանքները.

1. Կրթական բովանդակության ինչպիսի մինիմում է ամրապնդված ուսումնական պլանում:

2. Սովորողների առավելագույն շաբաթական ծանրաբեռնվածությունը:

3. Հանրապետական և ազգային դպրոցների ժամային բաղադրամասերի փոխհարաբերությունները:

Թեմատիկ և դասաքանակով պլանավորում: Թեմատիկ պլանավորման դեպքում ժամանակի ճիշտ բաշխումը թույլ է տալիս ոչ միայն նախատեսված ընթացքում ուսումնասիրել դասընթացը, այլև տեսնել և նախագծել դասավանդման հեռանկարները, նախանշել մոտակա և ապագա նպատակները, սահմանել հիմնական հարցերի կրկնության ժամկետները, ամփոփել արդյունքները: Այստեղ որոշվում է, թե գիտելիքների ինչպիսի խմբեր պետք է ձևավորվեն հակիրճ և իմաստալից ներկայացման դեպքում, ո՞ր թեմաներից պետք է անցկացնել սեմինարներ և ստուգարքներ, ե՞րբ և ո՞ր դասերին կազմակերպել էքսկուրսիաներ և այլն: Թեմատիկ-օրացուցային պլանը կարող է ունենալ հետևյալ կառուցվածքը՝ թեմայի անվանում, օրացուցային ժամկետներ, նախատեսված ժամաքանակ, դասերի վերնագրերը, գրականություն[5]:

Ավելի որոշակի է առանձին դասերով պլանավորումը, որտեղ նշվում է կատարող անձը, դասի թեման, դասի տիպը, ժամաքանակը, հիմնական հասկացությունները, գաղափարները, կապերի տեսակները, զննական միջոցները: Այսպիսով, պլանավորումը հանդիսանում է յուրատեսակ հենք, որի հիմքի վրա կազմակերպվում է նոր նյութի ուսումնասիրությունը: Որպեսզի ուսուցիչը խուսափի թերություններից, նախօրոք պլանավորում է պատմության դասավանդման ընթացքը, որը պարտադիր պետք է համապատասխանի պետական չափորոշիչներին:

Պատմության դասագիրքը: Դասագրքում առանձնանում են կառուցվածքային բաղադրիչներ: Պայմանականորեն դրանք երկուսն են՝ տեքստը և արտատեքստային նյութը: Գլխավորը տեքստն է, որը բաժանվում է հիմնական մասի, լրացուցիչ նյութերի /փաստաթղթեր, մեջբերումներ գրականությունից, կենսագրական նյութեր/ և բացատրական մասի /եզրույթների և հասկացությունների մեկնաբանություններ ու բացատրություններ/:

Արտատեքստային բաղադրիչները՝ պատկերազարդումներ /ֆոտոնկարներ, քարտեզներ, աղյուսակներ և այլ/, առաջադրվող գրականությունը, մեթոդական մասը /հարցեր, հանձնարարություններ, ժամանակագրական և մեթոդական նյութեր/:

Դասագիրքը ունի որոշակի գործառույթներ՝ տեղեկատվական, համակարգող, համադասող, ինտեգրող, ծրագրային նյութի կրող, վերահսկում, դաստիարակում: Ելնելով գործառույթներից՝ որոշվում են դասին դասագրքի նյութի օգտագործման միջոցները:

[5] Безрукова В. С. Все о современном уроке в школе: проблемы и решения. М.: Сентябрь, 2019. 159 с., с. 28.

Դասագիրքը՝ որպես պատմական գիտելիքների ձեռքբերման միջոց: Ուսուցման գործընթացում և հատկապես պատմության դասավանդման ժամանակ դասագրքին տրվում է առանձնահատուկ տեղ: Դասագիրքը դպրոցականի համար հանդիսանում է պատմական գիտելիքների ձեռքբերման հիմնական աղբյուրը, որը գիտելիքները հաղորդում է որոշակի համակարգով:

Դասագրքի բաղադրամասերը: Պատմության դասագրքերը սովորաբար ունեն տարբեր կառուցվածք: Դասագրքերի նյութերում և մեթոդական մասում առանձնացված են փաստաթղթերը և բացատրված են հասկացություններն ու եզրույթները: Դասագրքի բովանդակությունը բաժանվում է հիմնական, որի մեջ մտնում են տեսական և փաստական նյութը, լրացուցիչ՝ տեղեկատվական և բացատրական մասերի: Հիմնական նյութի կորիզը կազմում են կարևորագույն գաղափարները, հասկացությունները, տեսությունները և գործունեության ձևերը:

Դասագրքի նյութի բարդությունը կարող է լինել առարկայական, տրամաբանական և լեզվական: Մեթոդիստ գիտնականների կարծիքով դասագրքում լրացուցիչ և երկրորդական նյութերը պետք է 4 անգամ շատ լինեն գլխավորից, քանի որ դրանք նպաստում են վերջինիս ընկալմանն ու մտապահմանը: Դասագրքում նյութից դուրս բաղադրատարրեր են համարվում հարցերն ու առաջադրանքները, նկարազարդում- ները, փաստաթղթերը, աղյուսակները: Դրանք բացահայտում են դասագրքի բովանդակությունը կերպարային և զննական միջոցների օգնությամբ[6]:

Դասագրքի հետ աշխատելու ընդհանուր համակարգը: Դասարանի հետ աշխատանքի սկզբում ուսուցիչը պետք է նախապես պարզի աշակերտների կարդալու կարողությունները, որից հետո նրանց հետ կատարի անհատական աշխատանքներ: Կարդալու հմտություններն ու ունակությունները ստուգում է հերթական դասի հանձնարարման ժամանակ:

6-7-րդ դասարանում ուսուցիչը անընդհատ պետք է ստուգի, թե որքանով են աշակերտները հասկանում բառերի, հասկացությունների, նախադասությունների իմաստը: Դասագիրքը օգնում է կենտրոնացնել աշակերտների ուշադրությունը: Օրինակ՝ դասը բացատրելուց հետո ուսուցիչը առաջարկում է սովորողներին կարդալ նյութը և գտնել, թե նա ինչին է անդրադարձել կամ չի անդրադարձել:

[6] Коротаева, Е. В. Образовательные технологии в педагогическом взаимодействии: учебное пособие для вузов. М., 2020., с. 67.

ԳԼՈՒԽ 2. ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՉԻ ԿՈՂՄԻՑ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ «ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ 7-ՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

2.1. «Պատմություն» առարկայի 7-րդ դասարանի դասագրքի, հանրակրթության պետական ու առարկայական չափորոշիչների ուսումնասիրություն

Որևէ մեկիս համար գաղտնիք չէ, որ վերջին տարում տեղի ունեցան էական փոփոխություններ թե՛ իրավական, թե՛ դասագրքային համատեքստերում: Դասագրքերի տպագրված տարբերակները բավականին ուշ տրամադրվեցին և մեղմ կլինի ասել, որ բարձրացրին դժգոհության ալիք: «Պատմություն» գիտակարգից «Հայոց պատմության» ընտրությունը պայմանավորված է մեր ժողովրդի կողմից ապրվող ծանրագույն ժամանակաշրջանով և դա հաղթահարելու գործում պատմության ուսուցչի մեծագույն ավանդով:

Ասել, որ «Հայոց պատմության» դասագիրքը չի արդարացնում սպասումները, չենք ցանկանում, քանի որ դա արդեն իսկ ապացուցված իրողություն է: Մենք կդիտարկենք զուտ դրա նշանակությունը ուսուցման և դաստիարակության միջոցով պատասխանատու, հայրենասեր քաղաքացու ձևավորման գործում:

«Հայոց պատմություն» դասագրքի հավաստմամբ ստեղծված դասագիրքը համապատասխանում է ՀՀ Կառավարության 2021թ. փետրվարի 4-ի N 136-Ն որոշմամբ ընդունված Հանրակրության պետական չափորոշչին և կարողունակությունների վրա հիմնված ուսուցման սկզբունքներին: Հեղինակը պնդում է, որ դասագրքի բովանդակությունն ու կառուցվածքն արդեն իսկ հուշում են՝ ինչ քննարկել և ինչպես քննարկել դասը ընթացքում:[7]

Հանրակրթության պետական չափորոշիչը ելնում է կարողունակությունների վրա հիմնված մոտեցումից և սահմանում է սովորողներին ներկայացվող որակական պահանջները՝ ըստ կրթական աստիճանների (կարողունակություններ և ըստ կրթական աստիճանների ուսումնառության՝ ակնկալվող վերջնարդյունքներ), ուսումնական բնագավառները, դրանց բովանդակությանը ներկայացվող պահանջները, հանրակրթական հիմնական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնը, ուսումնական պլանի և առարկայացանկերի ձևավորման հիմնական սկզբունքները,

[7] Հովհաննիսյան Ս. «Հայոց պատմություն: Մեթոդական ուղեցույց»: 7-րդ դասարան, Եր., «Մասնակցային դպրոց» ԿՀ, 2023.-188 էջ, էջ 3-4:

սովորողների գնահատման ձևերը, սանդղակը, հաշվառման կարգը[8]: Հանրակրթության պետական չափորոշչի համաձայն՝ «Հայոց պատմություն» առարկայի նպատակն է հայկական քաղաքակրթության վերաբերյալ պատմական համակարգված գիտելիքի ձևավորումը: Առարկան նպաստում է պետականակիր գիտակցություն, ազգային ինքնագիտակցություն և դիմագիծ ունեցող, սեփական ժողովրդի և պետության դերակատարումը պատմության համապատկերում գիտակցող քաղաքացու զարգացմանը, ազգային և համամարդկային արժեհամակարգը կրող պատասխանատու քաղաքացու ձևավորմանը: Պատմական իրադարձությունները և դրանց մեկնաբանությունները ազդում են ժամանակաշրջանի հեռանկարների և հասարակության մեջ գերակշռող արժեքների վրա: Որպես կրթական առարկա՝ պատմությունը օգնում է զարգացնել սովորողների քննադատական մտածողությունը և երևակայելու կարողությունը: Այսպես պատմական հայեցակարգը դառնում է որոշակի իրադարձություն տեսնելու, վերլուծելու և գնահատելու կարևոր հիմքերից մեկը[9]:

Առարկայի ուսուցման հիմնական նպատակներից է պատմական մտածողության և կարողունակությունների ձևավորումը: Այդ նպատակի կենսագործմանը պատմության ուսուցիչը պետք է հասնի յուրաքանչյուր դասի: Հայոց պատմության ուսումնասիրումը մեզ տանում է անցյալ, սակայն դա միակ պատճառը չպետք է լինի պատմության ուսումնասիրության համար: Կարևոր է նաև հասկանալ պատմության անհրաժեշտությունն ու արժեքը, արդիականությունը, և թե ինչպես պատմության դասին սովորած հմտությունները կարող են բարելավել ինչպես աշխարհի մասին մեր պատկերացումները, այնպես էլ կյանքում հաջողության հասնելու մեր հնարավորությունները:

Հայոց պատմություն ուսումնասիրելու միջոցով ևս սովորողները ձեռք կբերեն.

- քննադատական մտածողության հմտություններ՝ համեմատելով, հակադրելով, համադրելով և կիրառելով պատմական տեղեկատվությունը կամ գիտելիքները,

- գրավոր և բանավոր ստեղծագործական մտածողության հմտություններ, որպեսզի կարողանանք վստահորեն վերակառուցել անցյալի կարևոր իրադարձությունները,

---

[8] Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի ապրիլի 8-ի N 439-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության 4 փետրվարի 2021 թվականի N 136-Ն որոշումը. Հասանելիությունը՝ https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788 (Վերջին մուտքը՝ 20.09.2023., ժամը 16:11)

[9] Հովհաննիսյան Ս. «Հայոց պատմություն: Մեթոդական ուղեցույց»: 7-րդ դասարան, Եր., «Մասնակցային դպրոց» ԿՀ, 2023.-188 էջ, էջ 28:

- թվային գրագիտություն՝ արդյունավետ կերպով օգտագործելով ներ տեխնոլոգիաների գործիքներն ու ռեսուրսները հետազոտության և նախագծային աշխատանքների համար,

- արդյունավետ հաղորդակցման հմտություններ՝ փոխգործակցության տարբեր մակարդակներում տեղեկատվության փոխանակման համար:[10]

Այս ամենը հիմք է տալիս Հայոց պատմության դասավանդումը դնել միմյանց փոխլրացնող հայեցակարգային հետևյալ հիմնասյուների վրա.

- զարգացնել պատմաքննադատական մտածողություն և վերլուծական հմտություններ,

- զարգացնել գրելու և ստեղծագործելու հմտություններ,

- ձևավորել սկզբնաղբյուրների հետ աշխատելու հմտություններ,

- զարգացնել աշակերտների իրազեկությունը մարդկային սոցիալական, մշակութային, քաղաքական և տնտեսական հաստատությունների բազմազանության և բարդության վերաբերյալ:

Բոլոր այս հիմնասյուները կայուն գործառնում են պատմության դասավանդման բազմատեսանկյուն մոտեցման ներդրման և առարկայական չափորոշիչների հաշվի առնմամբ: Պատմության դասավանդման բազմատեսանկյուն մոտեցման համար պարտադիր չէ, որ աշակերտները սեփական պատմական շարադրանքը մշակելու համար փորձ ունենան վերլուծելու աղբյուրները, մեկնաբանելու վկայությունները և համադրելու տեղեկությունները, սակայն այդպիսի փորձն օգտակար է: Աշակերտների համար շատ ավելի հեշտ կլինի համեմատել և համադրել տարբեր տեսակետները, եթե նրանք սովոր են իրենց հանդիպած ցանկացած աղբյուրի (փաստաթղթեր, տեսանյութեր, աուդիո-նյութեր) նկատմամբ կիրառել վերլուծական որոշակի համակարգ: Մեկ այլ հրապարակման մեջ հեղինակն անդրադարձել է այն եղանակներին, որոնք կարող են օգնել աշակերտին վերլուծելու աղբյուրների տարբեր տիպերը: Այս մոտեցման էությունը կայանում է նրանում, որ հիմնական հարցերը կարող են խմբավորվել հինգ հիմնական վերլուծական գործընթացների մեջ.

• Նկարագրություն. ի՞նչ կարգի աղբյուր է սա, ո՞վ է այն ստեղծել, ինչպիսի՞ն է եղել աղբյուրի հեղինակի ներգրավվածությունը իրադարձություններին (մասնակից, ականատես, լրագրող, մեկնաբան, պաշտոնյա, և այլն), որքա՞ն ժամանակ էր անցել իրադարձությունից, արդյո՞ք աղբյուրն ասում է, թե որն է եղել դրա ենթադրվող լսարանը,

[10] Հովհաննիսյան Ս. «Հայոց պատմություն: Մեթոդական ուղեցույց»: 7-րդ դասարան, Եր., «Մասնակցային դպրոց» ԿՀ, 2023.-188 էջ, էջ 25-26:

արդյո՞ք աղբյուրն ասում է, թե որն է եղել դրա հեղինակի նպատակը, ի՞նչ է այն մեզ ասում որոշակի պատմական իրադարձության կամ զարգացման մասին:

• Մեկնաբանություն. եթե մենք չգիտենք, թե ով է եղել աղբյուրի հեղինակը, արդյո՞ք աղբյուրից ինչ-որ բան կարելի է եզրակացնել նրա մասին (ներգրավվածության աստիճանը, իրադարձություններին մոտ լինելը, տեսանկյունը, կապերը, դերը, և այլն), արդյո՞ք աղբյուրից կարելի է գուշակել, թե ինչպես է հեղինակը ձեռք բերել տեղեկատվությունը, արդյո՞ք կարելի է ստուգել՝ որքանով է տեղեկատվությունը արժանահավատ, կարող ենք արդյո՞ք տարբերակել ստուգման ենթարկվող փաստերը, փորձագիտական կարծիքը և անձնական կարծիքը, կարող ենք արդյո՞ք գտնել աղբյուրի տեսակետը պայմանավորող հանգամանքները (օրինակ որոշակի դիրքորոշում ունենալը, նախապաշարմունքը մեկ այլ դիրքորոշման հանդեպ և այլն), արդյո՞ք աղբյուրի հեղինակն առաջարկում է որոշակի եզրակացություններ, արդյո՞ք դրանց ետևում կան որոշակի վկայություններ կամ կարծիքներ:

• Կապեր նախկինում ունեցած գիտելիքի հետ. արդյո՞ք աղբյուրի հաղորդած տեղեկությունները հաստատում են այլ աղբյուրներում առկա տեղեկությունները, թե հակասում են դրանց:

• Վկայությունների մեջ բացթողումներ գտնելը. արդյո՞ք բացակայում են որոշակի անուններ, տարեթվեր, կամ այլ փաստեր, որոնք կարող էին օգնել պատասխանել նախորդ հարցերին:

• Հետագա տեղեկատվության աղբյուրներ գտնելը. ո՞ր աղբյուրների օգնությամբ կարելի է ստուգել աղբյուրի հաղորդած տեղեկությունները և մեկնաբանությունները: Այնուամենայնիվ, թեև աղբյուրներ օգտագործող մոտեցումը պատմության դասավանդման հիմքում է դնում պատմական մեթոդը և պատմական հետազոտությունը, գոյություն ունեն այս մոտեցման հետ կապված պոտենցիալ վտանգներ (դրանք բոլորն էլ կարող են բացասական ազդեցություն ունենալ բազմատեսանկյուն մոտեցման վրա), և անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել այդ վտանգները չեզոքացնելու համար: Նախ և առաջ, աղբյուրներից տեղեկություններ քաղելը և աղբյուրի ներկայացրած պատկերը նկարագրելը շատ ավելի դյուրին է, քան այն գործընթացները, որոնք կապված են մեկնաբանության, ենթադրություններ անելու, աղբյուրի արժանահավատության մասին դատելու հետ: Որոշ աշակերտների անհրաժեշտ է օգնություն այս վերլուծական գործընթացի մեջ:

Պատմության ուսուցիչները մշակել են դրան ծառայող մի շարք ռազմավարություններ: Օրինակ, սովորողին հանձնարարվում է նոր դասագրքում առկա

տեղեկատվությունը վերլուծել: Սովորողը մեջբերում է կոնկրետ հատված և վերլուծում այն հետևյալ սխեմայով՝

Հատված աղբյուրից՝ …

Աղբյուրը պնդում է, որ…

Աղբյուրից հետևում է, որ…

Աղբյուրը չի նշում, որ…

Այս մոտեցման դեպքում սովորողները պետք է նշեն տարբերությունները այն բաների միջև, թե ինչ է աղբյուրն ասում իրենց, ինչ է աղբյուրից հետևում (այսինքն բացահայտորեն չի ասվում, բայց աղբյուրից կարելի է հասկանալ) և այն, ինչ աղբյուրը չի նշում: Երբ աշակերտները սովորեն նման մոտեցմանը, նրանք կարող են անցնել ավելի բարդ վերլուծության, որն, օրինակ, օգնում է նրանց համեմատել և հակադրել տարբեր աղբյուրները, այդ թվում այն աղբյուրները, որոնք միևնույն փաստերը տարբեր կերպ են մեկնաբանում և դրանց հիման վրա տարբեր հետևություններ անում: Ընդ որում այս մեխանիզմը հատկապես կարևոր է վերջին իրադարձությունների և դասագրքային փոփոխությունների համատեքստում:

Այս ողջ գործընթացում ուսուցիչն իր աչքի տակ ունենում է Հանրակրթական ուսումնական հաստատություններում «Հայրենագիտություն» բնագավառի («Իմ հայրենիքը» 5-րդ, «Իմ հայրենիքն ու աշխարհը» 6-րդ, «Հայոց պատմություն» 7-12-րդ դասարանների առարկաների) առարկայական չափորոշիչը հաստատելու մասին Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 30 մարտի 2023 թ. N 33-Ն հրամանը: Այդ հրամանի համաձայն VII-IX դասարաններ - «Հայոց պատմություն» առարկայի ծրագիրն ընդգրկում է, հայ ժողովրդի ծագումնաբանությունը, հայոց քաղաքակրթության ձևավորման և զարգացման պատմաաշխարհագրական միջավայրի, Ք.ծ.ա. III հազարամյակից մինչև մեր օրերն ընկած ժամանակահատվածի պատմությունը: Հիմնական դպրոցում սովորողները «Հայոց պատմություն» դասընթացի շրջանակներում կուսումնասիրեն հայոց քաղաքակրթության առանձնահատկությունները, պատմական զարգացման օրինաչափությունները, ձեռքբերումները և այլն: «Հայոց պատմություն» առարկայի VII-IX դասարանների ծրագրի կազմման հիմքում դրվել է պատմության ուսումնասիրման գծային մոդելը՝ պահպանելով ժամանակագրական հաջորդականության սկզբունքը: Ծրագրում քաղաքակրթական սկզբունքը զուգորդված է պատմական դարաշրջանների ժամանակագրական

հաջորդականության սկզբունքին: [11]: Ստացվում է, որ այս առարկայական չափորոշչի հենքով գրված դասագիրքը և պատմության ուսուցչի կողմից ներդրված ջանքերը պետք է ծառայեն սովորողի՝ որպես խելացի, հայրենասեր, պատասխանատու քաղաքացու ձևավորմանը:

2.2. Սովորողների ուսուցման և դաստիարակության պլանավորումը մեկ թեմայի շրջանակներում և ակնկալվող արդյունքները

Սովորողների ուսուցման և դաստիարակության հիմնական գործիքը դասագիրքն է, որը բաղկացած է ներածական դասից և յոթ թեմաներից.

- Հայկական լեռնաշխարհն ու առաջին քաղաքակրթությունները,
- Երվանդական Հայաստան,
- Արտաշեսյան Հայաստան,
- Արշակունյաց Հայաստան,
- Հայաստանը Պարսկաստանի, Բյուզանդիայի և Արաբական խալիֆայության միջև,
- Հայաստանի վաղ միջնադարյան մշակույթը (V-IX դդ.),
- Բագրատունյաց Հայաստան[12]:

Նախ նշենք, որ Հայոց պատմության դասագրքից էականորեն պակասել են թվականները, ինչի համատեքստում ուսուցչի կարևոր գործն է խնդրել սովորողներին կատարել նշումների թվագրության համատեքստում: Ընդունենք, ու ուսուցիչը պլանավորում է «Երվանդական Հայաստան» թեման: Հիմքում պետք է դնի.

- ուսումնական ծրագրով նախատեսված կարողունակությունների ձևավորումը,
- բազմազան գրավիչ նյութերի ներկայացումը և ուսուցման այլընտրանքային ուղիների փնտրումը,
- պետք է հիմնաքարային համարի տեսության և գործնականի զուգորդումը:

Թեմայի ուսումնասիրությանը հատկացվում է 11 ժամ, որի շրջանակներում ուսուցիչը մատուցում է տեղեկատվություն հետևյալ թեմաներով.

---

[11] Հանրակրթական ուսումնական հաստատություններում «Հայրենագիտություն» բնագավառի («Իմ հայրենիքը» 5-րդ, «Իմ հայրենիքն ու աշխարհը» 6-րդ, «Հայոց պատմություն» 7-12-րդ դասարանների առարկաների) առարկայական չափորոշիչը հաստատելու մասին Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 30 մարտի 2023 թ. N 33-Ն հրամանը. Հասանելիությունը՝ https://www.arlis.am/documentview.aspx?docID=179995 (Վերջին մուտքը՝ 22.09.2023., ժամը 14:20)

[12] Հովհաննիսյան Ս. «Հայոց պատմություն»: 7-րդ դասարանի դասագիրք, Եր., «Մասնակցային դպրոց» ԿՀ, 2023.-176 էջ, էջ 25-26:

- Երվանդական Հայաստանի կազմավորումը և Աքեմենյան Պարսկաստանը,

- Երվանդական Հայաստանի անկախության վերականգնումն ու Սելևկյանները,

- Երվանդական Հայաստանի սոցիալ-տնտեսական մշակութային կյանքը:

Ավարտին տրվում է թեմատիկ աշխատանք և կատարվում է ամփոփում:

Պլանավորման և դասն ըստ այդ պլանավորման իրականացնելու արդյունքում սովորողի մոտ կձևավորվեն հետևյալ կարողունակությունները.

- Նկարագրել Երվանդական Հայաստանի պետական կարգը, բանակը, տնտեսությունը, դիցարանը:

- Բնորոշել Երվանդունի արքաների և սատրապների գործունեությունը, կարծիք հայտնել նրանց գործունեության և ռազմաքաղաքական հարաբերությունների վերաբերյալ:

- Գնահատել և արժևորել Երվանդական Հայաստանի քաղաքակրթական ժառանգության տեղն ու դերը հայոց և համաշխարհային մշակույթների համատեքստում:

Որպես 7-րդ դասարանի դասընթացի վերջնարդյունքներ սովորողը կունենա հետևյալ կարողունակությունները.

1) Նկարագրել Հայկական լեռնաշխարհի պատմաաշխարհագրական պայմանները, առանձնահատկությունները, պատմավարչական բաժանումները:

2) Ներկայացնել Հայկական լեռնաշխարհի նշանավոր հնավայրերը, Հայկական լեռնաշխարհը որպես մարդկության և հայոց քաղաքակրթության զարգացման հնագույն բնօրրան լինելու փաստեր:

3) Ներկայացնել Հայաստանի մասին վկայություններ, հայերի տեղաբնիկ ծագումնաբանությունը վկայող փաստեր, համեմատի հայերի ծագումնաբանու-թյան վերաբերյալ տարբեր տեսություններ, ավանդազրույցներ:

4) Ներկայացնել և համեմատել հայոց պատմության առանցքային դրվագները, կարևոր փաստերը, երևույթները, իրադարձությունները, վերլուծի դրանց արդյունքներն ու հետևանքները:

5) Բնութագրել և գնահատել հայոց պատմության ակնառու գործիչների գործունեությունը:

6) Ներկայացնել և մեկնաբանել միջազգային, տարածաշրջանային և ներքաղաքական իրավիճակները, վերլուծի պատմական գործընթացների, արտաքին ու ներքին գործոնների ազդեցությունը հայոց պատմության տարբեր շրջափուլերում:

7) Վերլուծել հայկական պետականության ձևավորման, համահայկական միասնական պետությունների և կիսանկախ պետական կազմավորումների ստեղծման

նախադրյալները, կայացման ու զորեղացման պայմանները, կործանման պատճառներն ու հետևանքները, կատարի եզրահանգումներ:

8) Բացատրել V-IX դդ. նախարակական համակարգի տեղն ու դերը հայոց պետականության պատմության մեջ:

Իհարկե, ուսումնասիրվող դասագրքի համատեքստում այս վերջնարդյունքների ապահովումը բավականին բարդ է և պահանջում է ուսուցչի լրացուցիչ՝ պետական և առարկայական չափորոշիչները չխախտող ներգրավվածություն: Ուսուցիչը պետք է պետական և առարկայական չափորոշիչների դրույթները զուգորդի սովորողակենտրոն մոտեցման և ներդնի ուսուցման ինտերակտիվ մեթոդներ: ՈՒսուցումը լինում է օպտիմալ և արդյունավետ այն ժամանակ, երբ մարդիկ ունեն իրենց դրսևորելու, փոխադարձ համագործակցություն (ինտերակտիվ) ցուցաբերելու հնարավորություն: Ինտերակտիվ ուսուցման ժամանակ անհրաժեշտ է այնպիսի իրավիճակներ ստեղծել, որ սովորողները յուրօրինակ, նորարարական մոտեցում ցուցաբերեն հարցին՝ խրախուսելով խնդիրների լուծմանը ստեղծագործական մոտեցում ցուցաբերելու ունակություններ՝ ինչը հոգեբանության տեսանկյունից համարվում է արդյունավետ: Ուսուցիչը պետք է ստեղծի այնպիսի պայմաններ, որ սովորողները կարողանան մտովի տեղափոխվել կոնկրետ ժամանակաշրջաններ և ինքնուրույն փնտրեն դասընթացի ընթացքում առաջադրված խնդիրների լուծման ուղիները և մեթոդները (ընտրվում են առաջադրված մեթոդներից որևէ մեկը կամ առաջադրում են սեփական տարբերակը, հիմնավորելով լուծումները): Սա կօգնի սովորողին հայտնվել գործունեություն անսովոր պայմաններում, իսկ այդպես սովորողը կկարողանա անծանոթ պայմաններում իրականացնել նախկինում ձեռք բերված գիտելիքների ակտիվ վերարտադրություն: Սա ծառայում է ի նպաստ այն բանի, որ սովորողը գիտակցում է, որ պատմությունը կրկնվելու հատկություն ունի և ձևավորում է նման իրավիճակներում որոշումներ կայացնելու, խնդիրներ լուծելու կարողունակություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով մեր կողմից կատարված տեսամեթոդական ուսումնասիրությունները և գործնական աշխատանքի արդյունքները՝ նշենք, որ պատմության դասավանդումը դպրոցում, հատկապես «Հայոց պատմություն» առարկայի, ըստ պետական և առարկայական չափորոշչի, կապվում է հայի ազգային ինքնագիտակցության ու մտածողության հետ, նրա միջոցով ապահովվում է աճող սերնդի հաղորդակցումը մեր ժողովրդի անցյալի և պատմամշակութային ժառանգությանը: Այստեղից է բխում քաղաքացի կրթելու և դաստիարակելու խնդիրը: Դաստիարակչական խնդիրները, հենվելով գաղափարական հիմքերի վրա, անդրադառնում են ուսուցման նյութի բովանդակությանը: Պատմական կրթությունն ունի քաղաքացի դաստիարակելու, հայրենասիրություն, ազգասիրություն սերմանելու, ներկա ժամանակների իրողությունների վերաբերյալ գիտելիքներ փոխանցելու, հայկական մշակութային նվաճումները աշխարհի մշակութային նվաճումների հետ համեմատելու նպատակներ: Պատմական գիտելիքների փոխանցման, օրինաչափությունների յուրացման գործընթացը իրականացնում է անձի դաստիարակման և զարգացման տարբեր միջոցներով:

Ժամանակի հրամայականը, տեղեկատվական պատերազմները պայմանավորում են սովորողների մոտ պատմական գիտելիքների կայուն պաշարի ձևավորումը: Սովորողը պետք է ունենա պատմական այնպիսի գիտելիքներ, որ դրանց հիմքով կարողանա զտել համացանցում, այլ աղբյուրներում տարածվող պատմական տեղեկությունները, որոնք միտք ունեն խեղաթյուրել հայոց պատմությունը:

Ավելորդ չենք համարում նշել, որ հայոց պատմության ուսուցչի ձեռքերում է հայ ժողովրդի պատմության հնարավոր բեկումը մեզ համար լավագույն ելքով: Ուստի և պատմության ուսուցիչները պետք է պետական սևեռուն հոգածության ներքո գտնվեն, նրանց համար պետք է նախատեսվեն շարունակական վերապատրաստումներ, նրանք պետք է ազատ լինեն չափորոշիչների շրջանակներում ռազմահայրենասիրական դաստիարակություն տալու համատեքստում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Մասնագիտական գրականություն

1. Հովհաննիսյան Ս. «Հայոց պատմություն»: 7-րդ դասարանի դասագիրք, Եր., «Մասնակցային դպրոց» ԿՀ, 2023.-176 էջ
2. Հովհաննիսյան Ս. «Հայոց պատմություն: Մեթոդական ուղեցույց»: 7-րդ դասարան, Եր., «Մասնակցային դպրոց» ԿՀ, 2023.-188 էջ
3. Ստրադլինգ Ռ. “Պատմության դասավանդման բազմատեսանկյուն մոտեցումը. Ուսուցչի ձեռնարկ” բնագրի այս թարգմանությունը հրատարակված է Եվրոպայի Խորհրդի և ԵրՊԼՀ միջև կնքված պայմագրի համաձայն: – Եր.: “‘Լինգվա”, 2008թ. – 84 էջ
4. Безрукова В. С. Все о современном уроке в школе: проблемы и решения. М.: Сентябрь, 2019. 159 с.
5. Белослудцева В. В. Методика преподавания истории [Электронный ресурс] : учебнометодическое пособие / В. В. Белослудцева ; Пермский государственный национальный исследовательский университет. – Электронные данные. – Пермь, 2021. –88 с.
6. Вяземский Е. Е., Стрелова О. Ю. Методика преподавания истории в школе. М.: Владос. 2003. 384 с.
7. Глазырина, Т. Н. Методика преподавания истории : учеб.-метод. комплекс для студентов специальности 1-21 03 01 «История» / Т. Н. Глазырина. – Новополоцк : ПГУ, 2011. – 356 с.
8. Коротаева, Е. В. Образовательные технологии в педагогическом взаимодействии: учебное пособие для вузов. М., 2020., 158с.

Համացանցային աղբյուրներ

9. Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի ապրիլի 8-ի N 439-ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության 4 փետրվարի 2021 թվականի N 136-Ն որոշումը
10. Հանրակրթական ուսումնական հաստատություններում «Հայրենագիտություն» բնագավառի («Իմ հայրենիքը» 5-րդ, «Իմ հայրենիքն ու աշխարհը» 6-րդ, «Հայոց

պատմություն» 7-12-րդ դասարանների առարկաների) առարկայական չափորոշիչը հաստատելու մասին Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 30 մարտի 2023 թ. N 33-Ն հրամանը